# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի №911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

« » ———————— 2025 թվականի № -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի №911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի «Հանրային ծառայության առանձին տեսակներով նախատեսված պաշտոնների, դասային կոչումների և աստիճանների համապատասխանությունը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի №1796-Ն և 1797-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» №911-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
    - №1 հավելվածում «Պաշտպանության նախարարության զինվորական ծառայության պաշտոններ» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Զինվորական ծառայության պաշտոններ

| Պաշտպանության նախարարության | Պետական պահպանության ծառայության |
|---|---|
| ավագ | գլխավոր |
| | ավագ |
| միջին | միջին |
| կրտսեր | կրտսեր |

».

- №2 հավելվածում «Զինված ուժերում շնորհվող կոչումներ» 12-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

12.
Զինվորական կոչումներ

| Զինված ուժերում շնորհվող | Պետական պահպանության ծառայությունում շնորհվող |
|---|---|
| գեներալ-լեյտենանտ | գեներալ-լեյտենանտ |
| գեներալ-մայոր | գեներալ-մայոր |
| գնդապետ | գնդապետ |
| փոխգնդապետ | փոխգնդապետ |
| մայոր | մայոր |
| կապիտան | կապիտան |
| ավագ լեյտենանտ | ավագ լեյտենանտ |
| լեյտենանտ | լեյտենանտ |
| ավագ ենթասպա | ավագ ենթասպա |
| ենթասպա | ենթասպա |
| ավագ | |
| ավագ սերժանտ | |
| սերժանտ | |
| կրտսեր սերժանտ, եֆրեյտոր | |
| շարքային | |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան

2025 թ. ...................... ........

Երևան